

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2017 թ-ի նոյեմբերի 22-ին կայացած ընդլայնված խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ֆակուլտետի դեկանի 2016-2017 ուստարվա աշխատանքների հաշվետվությունը:

Նիստի աշխատանքներին ներկա էր ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը:

Նիստի նախագահող Հ. Ավանեսյանը դրեց հաստատման օրակարգը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետի մեկ տարվա աշխատանքի հաշվետվությունը: Նշված տարում ֆակուլտետն աշխատել է բավականին հազեցած ծրագրով: Հաշվետվությունը ներկայացվեց 3 հիմնական ուղղություններով: 2016-2017 ուստարին հազեցած էր գիտական կոնֆերանսներով , օր.Արիստոտելին նվիրված գիտաժողովը, և նյութերը տպագրվել են: Հաշվետու տարում Ընդհանուր հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ 65 –ը արտերկրից: Փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնը ևս միջազգային գիտաժողովի կազմակերպիչ է եղել՝ համալսրանի ղեկավարության անմիջական մասնակցությամբ: Այս աշխատանքները նպաստեցին միջազգային կապերի ընդլայնմանը և գիտական փորձի փոխանակմանը:

Ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմում եղել են որոշ փոփոխություններ, միջին տարիքը 44 է: Հրատարակվել են մենագրություններ, ձեռնարկներ և հոդվածներ: Ֆակուլտետի աշխատանքը ուսանողների կողմից գնահատվել է, միջինը 4.5-ից բարձր է: Հաշվետու տարում ֆակուլտետի աշխատանքներն իրականացվել են՝ համապատասխան ԵՊՀ-ի ռազմավարական ծրագրերի:

Ելույթ ունեցան՝ պրոֆ. Ս. Զաքարյանը, պրոֆ. Գ. Շահվերդյանը, Գ. Արշակյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Մանասյանը, Հր. Միրզոյանը:

Որոշեցին՝ Ֆակուլտետի դեկանի մեկ տարվա աշխատանքը գնահատել դրական:

Ռեկտոր Ա. Միմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ռազմավարությունը և պատասխանեց ներկաների հարցերին:

Նիստի նախագահ՝ Հ. Ավանեսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան